1922

ԱՐՈՒՍՅԱԿ

I

Պայծառ
Ու վառ
Շողեր հագած
Անապակ,

II

Ո՛վ, թարմ, ուրախ,
Շաղաղ-շարմաղ
Պայծառ ու պաղ
Լո՛ւյս։

Բարձրը սարի,
Ծաղկի, ջրերի,
Սիրո գերի
Կո՛ւյս։

Անտառ–բույսի,
Անտեր որսի,
Անսեր կույսի
Հո՛ւյս։
Կանանչ–ճերմակ

Աչերդ համակ
Կիրք, ահ ու զարկ,
Հո՜ւյզ...

III

Ծագի՛ր, ծագի՛ր,
Զարկի՛ր, զարկի՛ր,
Զարի, չարքի
Մութն հալածի՛ր
Արուսյա՛կ,
Լույս ցերեկի
Դուռը բացիր,
Արուսյա՛կ։

Հիվանդն անքուն,
Տըխուր մահճին,
Ճամփորդն անտուն,
Ճամփի միջին
Մընում են քեզ,
Երբ տի ծագես։

Հավքը [թառած]
Ծառի ճյուղից,
Ծառը [սառած]
Մըթընշաղից
Մընում են քեզ,
Երբ տի ծագես։

Հանդվորն հեռու,
Խուլ հանդերում,
Եղնիկն...

Խոր անտառում,
Մընում են քեզ,
Երբ տի ծագես։

Ծագի՛ր, ծագի՛ր,
Զարկի՛ր, զարկի՛ր,
Զարի, չարքի
Մութն հալածի՛ր.
Արուսյա՛կ,
Լույս ցերեկի,
Դուռը բացիր,
Արուսյա՛կ։

IV

Ահա ծագեց,
Ահա զարկեց
Արուսյակը
Աչագեղ,
Լուս...
Ու ոսկեհեր
Նաժիշտներով իր շըքեղ։

Ջահը ձեռին,
Ցոլաց վերին
Դարպասներից
Վաղորդյան,
Վարդ մատներով
Ետ քաշեց ծով
Վարագույրը
Սև մըթան։
[Կանգնեց] հըզոր

Ու լուսավոր
Անափ ծովում
Լազուրի,
Ցոլաց, ցայտեց,
Հեռու նետեց
Խուրձերն [առատ]
Լույսերի։

Ու [լուսածին]
Մոր առաջին,
Ավետավոր
Համասփյուռ,
Թրռավ թեթև,
Արագաթև
Քընքուշ մանուկն
Էն Զեփյուռ։

Ցողոտ, շաղոտ,
Անուշահոտ,
Թևին արավ
Ու գընաց,
Զով հով տալով
Ու խայտալով
Դեպ աշխարհը
Քընեած։

Ծիլ ու ծաղիկ
Մեղմիկ-մեղմիկ
Օրորվեցին
Նազանքով.
Հազար ձեն ձուն
Օրհնեց աստծուն

Լիքը անճառ
Բերկրանքով։

Գիշերն հատած
Ու գունատված
Քաշվեց անդունդն
Իր մութին,
Չարքերն էլ ետ
Փախան անհետ
Փապարները
Խավարչտին։

Ամեն մի տուն,
Ամեն մի բուն
Լցվեց լուսով նորածին,
Ամեն անբան
Ու բանական
Ելավ աշխույժ իր գործին։

V

Ու փայլում էր սեգ դիցուհին
Հաղթանակով աստվածային
Մութի դիմաց ջահը ձեռին –
Արևելքի երկընքում,
Լույս ու զվարթ երկընքում,
Լազուր ու վարդ երկընքում։

Մարդ, անասուն, թռչուն, մրջյուն,
Ամեն մի ձեն, ամեն հընչյուն
Ուղարկում էր նըրան ողջույն
Արևելքի երկընքում էն։

– Փառք լուսաբեր աստղին էն պերճ,
Որ փայլում է խաղաղ, անշեջ
Քընատ, գունատ աստղերի մեջ,
Արևելքի երկնքում էն։

VI

Մեգը բացվեց։
Հըպարտ ու մեծ,
Հագած ամբողջ կըրակ ու հուր,
Նըստած կառքը իր ոսկեհուռ,

Ճոխ ամպերը, կուտակ-կուտակ,
Առած իր շուրջն ու ոտի տակ,
Վեր բարձրացավ Արևը պերճ
Ու ճառագեց անհունի մեջ։
Փառքից հարբած
Ագահ աստված,
Փըռեց հայացքն ամենատես,
Չափեց անչափն [ագահ ու վեհ]
Ու նկատեց... կապույտ հեռվում
Շողշողում էր ու վառվըռում
Հմայքներով հըրաշագեղ
Արուսյակը – շարմաղ, շըքեղ։

Կըրքից հարբած,
Հուր գիրկը բաց
Ողջ երկընքով, տիեզերքով,
[Առաջ] վարեց արագ ձեռքով
Նըժույգները իր ոսկեպայտ,
Շող շող տալով ու հըրացայտ,
Հասավ, առավ իր գըրկի մեջ,
Հալեց, ձուլեց իր փառքի մեջ...